«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ------ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

ԱՌԱՐԿԱ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ - ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ _

ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՂԵԿԱՎԱՐ ----- ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

2022թ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը

Բոլորս ենք տեսնում, թե ինչպես է ժամանակի ատամնանիվը աննախադեպ արագությամբ առաջ մղում այս կյանքը: Հապաղել անհնար է.տեղեկատվական տեխնոլոգիաներն են հասարակությանը սրընթաց հետապնդում, տեղեկատվական դաշտն է հարստանում ահռելի քանակով ու ձևաչափով , իսկ ուսուցչի աշխատանքը էլ ավելի է զգոնություն պահանջում: Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացը արդյունավետ և հետաքրքիր կազմակերպելու համար այսօր մանկավարժին հարկավոր է մեծագույն հմտություն՝ սովորողին դասին ներգրավելու և դասապրոցեսի միջոցով անձի՝ որպես երկրի լիարժեք քաղաքացի ձևավորելու, համագործակցային մթնոլորտ ապահովելու, սովորողի մեջ ազգային , գեղագիտական, սոցիալական ճաշակներ և արժեք զարգացնելու համար: Տեղին է Չարենցից մեջբերել այս խոսքերը. Թե ուզում ես երգդ լսեն, Ժամանակի շունչը դարձի՛ր, Կապվի՛ր նյարդով յուրաքանչյուր, Քո աշխարհին, քո նոր դարին: Հիրավի, ուսուցիչը միայն և միայն այս սկզբունքով պիտի աշխատի, որպեսզի աշակերտը մնա նրա կողքին, անսա նրա խոսքին:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Արդյունավետ դասեր կազմակերպելու համար հարկավոր է հմտորեն շաղախել ավանդական և նորագույն ուսուցման մեթոդները, գերազանցապես տիրապետել առարկային, մանկավարժական տեխնոլոգիաներին, կիրառել նորարարական մեթոդներ, օգտագործել ՏՀՏ գործիքներ: Այս հետազոտական աշխատանքի նպատակն է առնչվել նախագծային մեթոդին,պարզել , թե «Գրականություն» առարկայի դասավանդման պրոցեսում որքանով է այս մեթոդը նպաստում աշակերտների ինքնուրույնությանը, անհատական գործունեությանը, համագործակցային աշխատանք կատարելուն, քննադատական մտածողությանը, նախաձեռնողական , հետազոտական, որոնողական հմտություններին:

Ըստ պրոֆեսոր Եվ. Ս. Պոլատի՝ նախագծային մեթոդը խնդրի (տեխնոլոգիաների) մանրամասն մշակման միջոցով դիդակտիկ նպատակին հասնելն է: Նախագծային մեթոդով կատարված աշխատանքը պետք է ավարտվի միանգամայն իրական, շոշափելի գործնական արդյունքով: Այն սովորողների որոշակի գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրություն է, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով: Նախագծային մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով:

Նախագծային մեթոդը հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մեթոդների համադրություն է, որի կիրառումը «Գրականություն» առարկայի դասին կարող է լինել արդյունավետ և նպատակահարմար:

Ըստ հանրակրթական պետական չափորոշչի սահմանման՝ գրականությունը խոսքի արվեստ է, գրականության ուսումնասիրության նպատակը սովորողին խոսքի գեղագիտությանը, խոսքի արվեստին հաղորդակից դարձնելն է: Իմ կարծիքով, առհասարակ, բոլոր արվեստների մայրն է գրականությունը, բնության ու մարդկային կյանքի անդրադարձն է այն, մարդկային հոգու հայելին է, մարդկանց սրտերի ապաստարանն ու պաշտպանը: Գրական երկը խոսքարվեստի զարկերակի տրոփյունն է, գրական կերպարը իրական և երևակայական ոգիների խառնուրդից ծնված մարդն է՝ իր աստվածային պատկերով և համամարդկային գաղափարներով: Եվ որպեսզի այս ամենը սովորողին հետաքրքիր կերպով հասանելի լինի, նպատակահարմար է նաև նախագծային աշխատանք կազմակերպելը: Հանրակրթական պետական չափորոշիչը հստակորեն պարզաբանում է, որ հայ գրականության երկերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հարստացնելու սովորողի բառապաշարը, պատկերավոր մտածողությունը, երևակայությունը, ստեղծագործական կարողությունները, ձևավորել գրական ճաշակ և ընթերցանություն: Եվ քանի որ նախագծային աշխատանքը գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրություն է, ուստի գրականության ուսուցիչը կարող է այս մեթոդով գրական ստեղծագործություն ուսումնասիրելու գործընթացը դարձնել արդյունավետ և հետաքրքիր, իսկ աշակերտներին՝ միմյանց հետ համագործակցող, կողմնորոշվող, նախաձեռնող, պրպտող, ինքնուրույն աշխատող և , որ ամենակարևորն է, ներկայանալի...

Նախագծային աշխատանքներ կազմակերպելու համար կարելի է օգտվել նախագծերի հետևյալ տեսակներից՝ Հիմք ընդունելով ՀՊՉ –ով սահմանված «Գրականություն» առարկայի ծրագիրը:

1. Գործնական կողմորոշիչ նախագիծ. օր.՝ Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի ստեղծման պատմությունը, կամ Հովհաննես Թումանյանի կյանքը, գրական և հասարակական գործունեությունը, կամ Համո Սահյանի բնօրրանի պատկերը իր բանաստեղծություններում:
2. Անհատական նախագիծ. օր.՝ «Անուշ» պոեմում նկարագրված Համբարձման տոնի և մեր օրերում անցկացվող Համբարձման տոնին վերաբերող Ջանգյուլում կամ այլ միջոցառումների մասին
3. Տեղեկատվական նախագիծ. օր.՝ Ստեղծել կարոտի գրականության մասին պատմող ստեղծագործությունների համացանցային ալբոմ կամ ստեղծել օտարագիր հայ գրողների տեղեկատվական համացանցային կայքէջ:
4. Ստեղծագործական նախագիծ «Մեր ծնողների մանկությունից մինչև մեր մանկություն» կամ «Ինչ տարբերություններ կան իմ և ծնողներիս պատանեկության մոլորակներում»
5. Դերային նախագիծ՝ «Սրտի և մտքի հակասումը Լևոն Շանթի« Հին աստվածներում» «Մեծապատիվ մուրացկանները մեր օրերում»

Հետազոտական աշխատանքը առավել պատկերավոր ներկայացնելու համար նպատակահարմար է վերոնշյալ նախագծերից մեկը ընտրել և դարձնել նախագծային աշխատանքի օրինակ:

ԳԼՈՒԽ 1

c

1. Պրոբլեմ (հիմնահարց) Նախագծային աշխատանքը իրականացնելու համար սովորողներին տրամադրվում է հիմնահարցը. ուսուցիչը ներկայացնում է նախագծի թեման, առաջարկում նախագծի հիմնական պրոբլեմը, ձևակերպում նպատակներն ու խնդիրները: Աշակերտներն իրականացնում են պրոբլեմի ընկալումը, իրադրության մեջ հարմարվելը, կոնկրետացնում նպատակներն ու խնդիրները:

Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի ստեղծման պատմությունը

Նպատակը- 1. Հետազոտական աշխատանքի միջոցով սովորեցնել հաղորդակից լինել հեղինակի կյանքին, կատարած գրական աշխատանքին և ստեղծագործությանը ,

2. Զարգացնել սովորողների ինքնուրույն աշխատելու կարողությունը, բացահայտել նրանց նախաձեռնողական հնարավորությունները,

3. Խթանել գիտելիքների ավելացմանը և ամրապնդմանը,

4.Աջակցել սովորողին՝ գրական նյութի միջոցով գաղափար ունենալ ազգային և մշակութային արժեքների մասին,

5. Սովորեցնել համակարգել գիտելիքները , կիրառել և կարողանալ տարածել:

ՀԻՄՆԱՀԱՐՑ Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի ստեղծման պատմությունը

Ուսուցիչը իր խոսքով նախ և առաջ հետաքրքրություն է առաջացնում դեպի կատարվելիք աշխատանքը: Անդրադառնալով առարկային՝ նշում է, որ գրականության աշխարհը մաքրագործվելու մի ուրույն աշխարհ է, այստեղ մուտք են գործում բոլոր ընթերցասերները: Այդ աշխարհի մուտքը մոգական ալիքներ է փոխանցում: Շարունակելով նախագծի վերաբերյալ բացատրական աշխատանքը՝ ուսուցիչը տալիս է ձևակերպումներ և հանձնարարում , որ դրանից բխեցնեն հիմնավոր կարծիքներ: Ուսուցիչը նշում է, որ յուրաքանչյուր գրական ստեղծագործություն սերտորեն կապվում է հեղինակի կյանքի և գործունեության հետ, և գրեթե հնարավոր չէ հեղինակի գործունեությունը առանց ուսումնասիրելու, նրան և նրա ապրած ժամանակաշրջանը առանց ճանաչելու՝ հասկանալ ստեղծագործության ասելիքը:

Երջանկահիշատակ Վազգեն Առաջինն ասում էր.«Ինչպե՞ս կարելի է Պարույր Սևակի գերեզմանի առաջ չհավատալ հոգու անմահությանը…Պարույր Սևակի ծնունդը մեր

կյանքի, մեր մշակույթի, մեր ներկայի ու մեր ապագայի համար եղավ ճշմարտապես մի «Եղիցի լույս»: Պարույր Սևակն այնպիսիններից եղավ, որ պիտի ապրի այնքան ժամանակ, ինչքան ժամանակ պիտի ապրի հայ ժողովուրդը: Իսկ հայ ժողովուրդը անմահներից մեկն է աշխարհում »:

Ուսուցիչը հանձնարարում է նախագծային աշխատանքը ներկայացնել այնպես, որ հստակ երևա Պարույր Սևակի անմահության և հայ ժողովրդի հարատևության գաղափարը:

2. **Պլանավորում (նախագծում)** ուսուցիչը կազմակերպում է նախագծի գործունեությունը, առաջարկում կազմավորել խմբեր, բաշխել աշակերտների դերերը խմբերում, պլանավորել նախագծի գործունեությունը և պրեզենտացիայի հնարավոր ձևերը: Աշակերտներն իրականացնում են խմբերի բաժանումը, բաշխում են դերերը խմբում, պլանավորում աշխատանքը, ընտրում արդյունքների և պրեզենտացիայի ձևերն ու եղանակները:

ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ-

Ուսուցիչը նախագծի գործունեությունը կազմակերպելիս հաճախ ուղղորդող դասախոսություններ է կատարում և սովորողների ուշադրությունը սևեռում է կոնկրետ փաստերի վրա: Նշում է, որ «Անլռելի զանգակատունը» հանճարեղ օրինակ է, որի միջոցով ընթերցողը հաղորդակից է դառնում ոչ միայն բանաստեղծական արվեստին, այլ նաև նյութի պատմականությանը: Գլխավոր հերոսը՝ Կոմիտասը, ընկալվում է՝ որպես հայ ժողովրդի տաղանդի, անձնվիրության, ազգային հոգեկերտվածքի և ողբերգականության մարմնացում: Այսպիսի ստեղծագործությունները ընթերցողին մոտեցնում են ազգի պատմությանը, մշակույթին, սովորեցնում են գնահատել ազգային արժեքները:

Որպեսզի կարողանանք հասկանալ գրական երկի ասելիքը, պետք է նախ և առաջ ճանաչենք հեղինակին՝ որպես իր ժամանակի անհատ, որպես մարդկային բացառիկ որակներով օժտված մարդ, ուսումնասիրենք նրա հայացքները, ապրած ժամանակաշրջանը. այդ հարցում շատ են օգնում ինքնակենսագրությունները, ինչպես նաև ժամանակակիցների հուշագրությունները: Հանձնարարում է նախագծային աշխատանքում անպայման անդրադառնալ թվարկված խնդիրներին:

Աշակերտները իրականացնում են խմբերի բաժանում՝ ըստ թեմաների: Այս նախագծային աշխատանքը երկարաժամկետ է և սահմանվում է կատարել մինչև տարեվերջ:

Խումբ 1 - ենթաթեման՝ Պարույր Ղազարյանից մինչև Պարույր Սևակ :

Խումբ 2 - ենթաթեման՝ Սևակի ակնածանքը դեպի երաժշտագետ Կոմիտասը

Խումբ 3 - ենթաթեման՝ «Կոմիտասյան դրաման»

Խումբ 4 - ենթաթեման Մտորումներ ստեղծագործական ճանապարհին և «Անլռելի զանգակատուն» պոեմի ծնունդը

Խումբ 5- ենթաթեման՝ «Անլռելի զանգակատուն » պոեմի ընդունելությունը և հայ ժողովրդի ոգևորությունը

Խումբ 6 - ենթաթեման՝ Պոեմի կառուցվածքը և բովանդակությունը. պոեմից դեպի երգարվեստ ու դեպի մեծ իրականություն:

3. Պրպտում (տեղեկատվության որոնում) Ուսուցիչը տեղեկատվության որոնման գործին չի մասնակցում: Նա խորհրդատվություն է տրամադրում, հսկում խմբերի աշխատանքը, տալիս նոր գիտելիք, կատարում պրեզենտացիայի փորձեր: Աշակերտներն աշխատում են ինքնուրույն, ակտիվ, յուրաքանչյուրն իր դերով, խորհրդակցում են իրար հետ, որոնում և նախապատրաստում նյութեր պրեզենտացիայի համար

ՊՐՊՏՈՒՄ_ Որպես նոր գիտելիք՝ ուսուցիչը պրպտման ընթացքի համար դասախոսություն է կարդում՝ «Կոմիտասյան թեման Պարույր Սևակի աշխարհում»:

Այս փուլում ուսուցիչը աշակերտներին խորհրդատվության կարգով տրամադրում է նյութեր կամ գրքեր հետազոտական աշխատանք կատարելու համար.

Ալբերտ Արիստակեսյան, Պարույր Սևակ: Կենսամատենագրություն,

«Պարույր Սևակը... հուշագիրների ափի մեջ» Նինա Հովսեփյան
Վարդգես Բաբայան, «Պարույր Սևակի հետ»

Էդուարդ Մեհրաբյան, «Նորից քեզ հետ. Պարույր Սևակ» /ալբոմ-ուղեցույց

Խիկար Բարսեղյան« Պարույր Սևակի «Եղիցի լույսի»ողիսականը և ոչ միայն...»
Պարույր Սևակ. «Ինքնակենսագրություն»
Առաքել Պատրիկ«Կոմիտասյան դրաման»
Աշակերտները կարող են պրպտումներ կատարել նաև համացանցում:

4. Պատրաստում (նախապատրաստում)՝ ուսուցիչը կատարում է դիտումներ, անհրաժեշտության դեպքում աշակերտներին խորհուրդներ տալիս, նախապատրաստում նախագծի պաշտպանությանը: Աշակերտները կատարում են հետազոտություններ, վերլուծում տեղեկությունները, աշխատում նախագծի վրա, փորձեր են անում, պատրաստվում նախագծի պաշտպանությանը:

Այս փուլում խմբերը ներկայացնում են իրենց նախնական աշխատանքները, կատարած հետազոտությունները, խմբի յուրաքանչյուր անդամ ներկայանում է իր կատարած աշխատանքով: Ուսուցիչը նախապատրաստում է նրանց՝ նախագծի պաշտպանությանը:

Աշակերտները նշում են . որ իրենց աշխատանքները ներկայացվելու են առանձին ելույթների, սահիկաշարերի տեսքով, տեսաձայնագրվելու է ամբողջը, վերջնարդյունքը լինելու է ֆիլմի տեսքով, որը տեղադրվելու է մեդիահարթակի էջերից մեկում:

5 . Պաշտպանություն (պրեզենտացիա)՝ ուսուցիչը լսում է, աշակերտներին հարցեր ուղղում, անհրաժեշտության դեպքում ուղղորդում է, գնահատում նրանց կատարած աշխատանքի որակը և պրոբլեմի լուծման ինքնատիպությունը: Աշակերտները ներկայացնում են ուսումնական նախագիծը, մասնակցում խմբային վերլուծությանը, արդյունքների գնահատմանը:

Այս փուլում խմբերը ներկայացնում են իրենց հիմնական աշխատանքները, պատասխանում են ուսուցիչների հարցերին, հանդես գալիս ձեռք բերած գիտելիքների դրսևորման և վերջնարդյունքի ցուցադրման ինքնատիպ եղանակներերով: Ուսուցիչը գնահատում է նաև նրանց խոսքը, պատրաստվածությունը, ռեֆլեկտիվ, որոնողական , հետազոտական, համագործակցային հմտությունները , կառավարման կարողությունները, ինչպես նաև շնորհանդեսների պատրաստման և ներկայացման հմտությունները:

ԳԼՈՒԽ 2

Խումբ 1 Պարույր Ղազարյանից մինչև Պարույր Սևակ

Խումբը նախապատրաստել է սահիկաշար

Խմբի անդամներից մեկը , ով լավ է տիրապետում SS գործիքներին, սահիկաշարի պատրաստման պատասխանատվությունը վերցրել է իր վրա: Խմբի պատասխանատուն ցուցադրում է դրվագներ՝ կատարված դասարանական էքսկուրսիայից:

Ամբողջը տեսագրվում է վերջնարդյունքի՝ ֆիլմի համար

Ցուցադրելուն զուգընթաց՝ պատմում է, որ այցելել են Պարույր Սևակի ծննդավայր՝ Զանգակատուն՝ նախկինում՝ Չանախչի: Եղել են Պարույր Սևակի տուն- թանգարանում, որը բացվել է բանաստեղծի ողբերգական մահվան 10-րդ տարելիցի օրը՝ 1981 թ. հունիսի 17-ին

Թանգարանը կառուցվել է գրողի առանձնատան կողքին, այգու հարևանությամբ :

2015թ. մարտին բացվեց տուն-թանգարանի նոր մասնաշենքը, որն ունի զանգակատան տեսք։ Այն ներառում է տուն-թանգարանի վարչական մասը, գրապահոցը և ընդունելությունների սրահը։

Պարույր Սևակի տուն-թանգարան համալիրն այսօր ներառում է թանգարանի երկու մասնաշենքերը, բանաստեղծի կառուցած առանձնատունը (1960թ.), այգին և հայրական տունը (1924թ.)։
Ցուցասրահը հարստացված է Պարույր Սևակին նվիրված՝ նկարիչ Սարգիս Մուրադյանի՝ 1985-1986 թթ. կատարած մեծադիր խորհրդանշական որմնանկարով, որտեղ ներկայացված են գրողի կյանքի և ստեղծագործության կարևոր շրջափուլերը։



Թանգարանի նախասրահ-դահլիճում ցուցադրված են բանաստեղծի կյանքի ու ստեղծագործական տարբեր փուլերին վերաբերող ցուցանմուշներ՝ անձնական իրեր, վավերագրեր, ձեռագրերի պատճեններ, տարբեր լեզուներով հրատարակություններ։ Ցուցասրահի մի անկյունում ճգրտությամբ վերարտադրված է Պ. Սևակի՝ երևանյան բնակարանի աշխատասենյակը՝ բնօրինակ կահույքով և ցուցանմուշներով։

Թանգարանում պահպանվում են շուրջ 700 ցուցանմուշներ և Պ. Սևակի անձնական գրադարանի 1000-ից ավելի գրքեր։ Տուն-թանգարանի բակում՝ այգու արևելյան հատվածում են գտնվում Պարույր Սևակի, նրա կնոջ՝ Նելլի Մենաղարաշվիլիի, և ծնողների՝ Ռաֆայել և Անահիտ Սողոմոնյանների շիրիմները։

2019 թվականից թանգարանի ցուցադրության մաս է կազմում նաև Պարույր Սևակի հայրական տունը։ 1926 թվականին այդ տանն են հաստատվել հայ մեծանուն բանաստեղծի ծնողները՝ Ռաֆայել և Անահիտ Սողոմոնյանները, հորեղբայրը՝ Վահան Սողոմոնյանը։ Այստեղ են անցել Պ. Սևակի մանկությունն ու պատանեկությունը (1926-1940թթ)։ Տան առջև փռված է մի փոքրիկ այգի՝ խնձորի, ծիրանի, ընկույզի ծառերով։ Ինչպես այդ շրջանում գյուղի մյուս տները, Պարույր Սևակի հայրական տունն էլ ունեցել է հարթ տանիք։

Տների այսպիսի կառուցվածքը բնորոշ է եղել Պարսկաստանի Խոյ և Սամաստ գավառներին։ Պատերը կավածեփ են, տանիքը՝ հողածածկ։ Այս շինության մաս է կազմում էյվանը, որտեղ գտնվում են թոնիրները, իսկ դրանց հարևանությամբ սանդն է, որի մեջ օթակով ձավար են ծեծել, այնուհետև՝ երկանքով աղացել։ Էյվանին կից գոմն է, իսկ դրա հարևանությամբ՝ օթախը։ Վերջինս այն սենյակն է, որտեղ ապրել է ամբողջ ընտանիքը։ Սենյակի կահավորանքը կազմել են թախտերը, որոնցից մեկի վրա հավաքվել է տան անկողինը Սենյակի մեջտեղից բարձրանում է մի հաստ սյուն, որը ոչ միայն տանիքի հիմնական գերանի հենակն է, այլև ծառայել է որպես զանազան առարկաների, այդ թվում՝ նավթի լամպի կամ ձեթի ճրագի կախարան։ Սենյակի կենտրոնում թոնիրն է, որի վրա ուշ աշնանից մինչև գարնան ավարտ դրվող քուրսին ծառայել է որպես և՛ ճաշասեղան, և՛ զրուցասեղան, իսկ հետո նաև գրասեղան՝ պատանի Պարույրի համար։ Թոնիրը ոչ միայն լավաշ թխելու, ճաշ եփելու համար էր, այլև՝ սենյակում ջերմություն ապահովելու։ Օթախի հարևանությամբ է գտնվում հացատունը կամ մարագը, որը

նաև մառանի դեր է ունեցել: Այդտեղ պահվել են կենցաղային իրեր և գյուղատնտեսական գործիքներ:

Խմբից ընտրում են դերակատարներ, արտաքնապես կերպարանափոխելով՝ նմանեցնում են Սևակին և մորը՝ համապատասխան հատված բեմադրելու համար



Խմբի անդամները իրար հաջորդելով պատմում են Սևակի «Ինքնակենսագրություն» աշխատությունից հատվածներ՝ նշելով, որ դա հրաշալի միջոց է բանաստեղծին անձնապես ճանաչելու և նրանից շատ բաներ սովորելու համար: Մեջբերվում է հատվածը, ցուցադրվում են նկարներ:

Ամբողջը տեսագրվում է ֆիլմի համար

«...Պատմության կամեցողությամբ հորս կրթությունը վերջացել է գրաճանաչությամբ: Մայրս այդ բախտին էլ չի արժանացել: Հայոց այբուբենի ամենահեշտ գրվող տառը ս-ն է: Եվ փոքրիկ քույրս հաճախ էր մորս հոգին հանում. Բաս գրել էլ չգիտես:

Այդ պատճառով չէր արդյոք, որ ապրածս կյանքի կեսից ավելին (ամբողջ 23 տարի) անցավ ուսման վրա:

Դպրոց գնացի շատ վաղ՝ 6 տարեկան հասակում, ըստ որում արդեն գրաճանաչ և թվաբանական 4 գործողությանը տեղյակ: Միջնակարգն ավարտեցի գյուղում: Սիրում էի բոլոր առարկաները, այդ թվում նաև ֆիզիկա - մաթեմատիկականները: Դժվարանում եմ ասել, թե ինչն էր ավելի մեծ հաճույք պատճառում. երազած վեպի ընթերցանությունը, թե երկրաչափական խնդիրների լուծումը:

«...Դեռ չէի ածիլվում, երբ ընդունվեցի Երևանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունքը՝ հիասթափեցնելով իմ բոլոր դասատուներին, բացի գրականության ուսուցչից և ... մորիցս, եթե սա իմանար, թե ինչ բան է բանասիրականը և ինչու եմ ընդունվել այդ բաժանմունքը: Ուսուցիչներիցս յուրաքանչյուրը համոզված էր, որ պիտի ուսումս շարունակեմ իր առարկայի խորացմամբ: Գաղտնապահ երեխա էի: Ոչ թե ծածկամիտ, այլ գաղտնապահ: Այն ժամանակ ես չգիտեի, իհարկե, ինքնասիրություն, առավել ևս արժանապատվություն բառերը: Բայց հիմա գիտեմ, որ գաղտնապահությունը պայմանավորվում է այդ հատկանիշներով: Եվ գիտեմ նաև, որ գաղտնապահ երեխաները հետագայում դառնում են շատ անկեղծ և ուղղամիտ մարդիկ... Կարդում էի…

Ու մերոնք երկյուղում էին, թե... կգժվեմ: Գյուղացիք համոզված էին, որ շատ կարդալուց մարդկանց աչքերին կամ սև ջուր է իջնում, կամ խելքներն են թռցնում: Ծնողներիս վախը կրկնապատիկ էր, որովհետև մեր գյուղացիք համոզված են եղել, որ իմ հայրական պապը... շատ կարդալուց գժվել է: Եվ անհիմն էլ չի եղել նրանց կարծիքը: Պատմում էին, որ նա՝ եզները լծած, սերմացուն ջորուն բարձած, գնում է վար անելու և ինչ-որ գիրք բացելով՝ մոռանում է ոչ միայն լծված եզների գոյությունը, այլև այն, որ սերմացուի 8 փթանոց պարկերը չի իջեցրել ջորուց: Պապիս գժվածության մասին այսօրինակ տասնյակ այլ ապացույցներ էլ էին պտտվում: Բայց հետագայում, 30-ական թվականների վերջերին, նրա հատուկենտ ժամանակակիցները սկսեցին հիշել նույնքան և ավելի ապացույցներ՝ այս անգամ էլ այն մասին, որ պապս ոչ թե խելագար էր, այլ... համարյա թե մարգարե, որովհետև... օղորմածիկը ինչ որ ասում էր՝ կատարվեց...

Եվ, հավանաբար, պապեկան այդ արյունն էր շրջում մեջս՝ ստիպելով գիշերներ լուսացնել ձեռքս ընկած գրքի վրա և վախ ներշնչելով ծնողներիս, թե ես էլ շատ կարդալուց կգժվեմ: Եվ որովհետև նրանց խրատ-հորդորանքը արդյունք չէր տալիս (ես շարունակում էի գժվելու ճանապարհը), ապա անգրագետ մայրս հաճախ էր տեղիք տալիս հետևյալ երկխոսությանը.

Բեմադրվող հատվածը

- Էսքան որ կարդում ես, աչքերիդ մեռնեմ, ի՞նչ պիտի դառնաս. Վարժապե՞տ:

Բա ի՞նչ, - պատասխանում էի ես:

- Ոնց որ էս բոլոր վարժապետնե՞րը:

- Բա ո՞նց:

- Էհ, կուրանամ ես, չելավ...

- Բա ի՞նչ կուզեիր, որ լինեի:

Մայրս, ինչպես ասացի, անգրագետ է: Նա, բնական է, չգիտեր ո՛չ գրող, ո՛չ էլ բանաստեղծ բառերը: Բայց նա ակամա լսում էր իմ ու քրոջս բարձրաձայն ընթերցանությունը, ուստի և գիտեր, օրինակ, Գիքորի տխուր պատմությունը: Այն ժամանակ նա տակավին միտը չէր պահել նույնիսկ Հովհաննես Թումանյանի անունը: Ուստի և իմ «Բա ինչ կուզեիր, որ լինեմ » հարցին պատասխանում էր.

- Էսքան որ կարդում ես, գոնե դառնայիր էն Գիքոր–ը գրողի պես մարդ:

Ես՝ գաղտնիքս մեծ - ինքս փոքրիկ, արդեն վաղուց համոզված էի (ոչ թե երազում էի, այլ համոզված էի), որ դառնալու եմ էն Գիքոր–ը գրողի պես մարդ, այսինքն՝ գրող կամ բանաստեղծ: Բայց այդ մասին գիտեի լոկ ես ու մեկ էլ... Աստված: Եվ կյանքիս առաջին մեծ զարմանքն էր, թե որտեղից մայրս իմացավ այն, ինչ հայտնի է միայն

Աստծուն: Այն ժամանակ ես չգիտեի, որ եթե բանաստեղծները Աստծու հետ ունեն միջնորդված առնչություն, ապա նրանց մայրերը Աստծուն հաղորդակից են անմիջապես... »

Էն Գիքոր–ը գրողի պես մարդ դառնալու անկասկած համոզվածությամբ էլ ես համալսարան գնացի: Այն ժամանակ լրագրերում տպված ամեն մի ոտանավոր ինձ թվում էր գլուխգործոց և ոտանավորի գլխին կամ տակը տպված ամեն մի ազգանուն՝ հանճար: Բայց համալսարանական կյանքիս առաջին իսկ ամիսը իմ հափշտակության և համոզվածության վրա ոչ միայն պաղ ջուր լցրեց, այլև մտրակեց ինձ կրակե այն խարազանով, որի շաչյունի բառացի թարգմանությունն է ուշքի գալը:

Ամենից առաջ՝ իսկույն հասկացա, որ բան չգիտեմ, այսինքն՝ գիտեմ լոկ այն, ինչ գրված է եղել մեր քրեստոմատիայում. հատված մի վիթխարի վեպից (բայց ոչ վեպը), երկու ոտանավոր՝ մի մեծ բանաստեղծից (բայց ոչ բանաստեղծին), ...

Նաև չուշացա հասկանալ, որ անգրագետ եմ: Այն ժամանակ դեռ ականջիս չէր հասել Մաքսիմ Գորկու ահռելի ճիչը. Ինչ երջանկություն է գրագետ լինելը: Բայց ինձ այդ ճիչը չհամակեց միայն, այլև սարսափի մատնեց, երբ ոչ թե իմացա ի լրո, այլ զգացի սեփական ուղն ու ծուծովս, որ եթե գրագետ լինելը դժվար է ընդհանրապես, ապա քառակի դժվար է գրագետ լինելը հայերենից, որովհետև հայոց լեզուն լավ իմանալ նշանակում է տիրապետել... չորս գրական լեզվի (գրաբար, միջին հայերեն, արևմտահայերեն, արևելահայերեն): Իսկ եթե սրան էլ ավելացնենք, որ հայերենն ունի նաև 60 բարբառ, որոնցից շատերն իրարից ավելի են հեռու, քան ռուսերենը ուկրաիներենից, և որ իմ մայրենի բարբառը գրական հայերենին մոտիկ է նույնքան, որքան չեխերենը ռուսերենին, - ապա կուրվագծվեն հայերենը տիրապետելու դժվարության մոտավոր սահմանները»:

Խումբը իր ելույթն ավարտում է մայրենի լեզվին նվիրված սևակյան տողերով.

«Մայրենի լեզու» / հատված/

Դու մեր մեծ երթի գավազանակիր
Եվ մեր պատմության մեծագո՛ւյն դիվան,
Մեր ազնվության գովասանագիր,
Մեր մտքի պահեստ, հոգու օթևան:
Անցյալին պարզված դու մեր լսափող,
Եվ մեր խոսափող՝ գալիքին ուղղված:
Դու մեր սրբություն՝ կնքված Մեսրոպով,
Նարեկացիով օծված ու յուղված:

ԳԼՈՒԽ 3

Խումբ 2 -- Սևակի ակնածանքը դեպի երաժշտագետ Կոմիտասը

Խումբը նախապատրաստել է սահիկաշար

Այստեղ ևս խմբի անդամները կատարել են աշխատանքի բաժանում և հաջորդաբար ներկայացնում են իրենց աշխատանքները

«Իմ գիտակցական ամբողջ կյանքում ես տառապել եմ եթե կարելի է ասել, Կոմիտասասիրությունից: Գրել Կոմիտասի մասին, հավասարազոր է գրել հայ ժողովրդի վերջին 100 տարվա պատմությունը՝ ժողովրդի կյանքով ու երազանքներով, կենցաղով ու գոյամարտով, երգ ու լացով, եվրոպական դիվանագիտությամբ, ազգագրությամբ ու ազգագիտությամբ, անցյալով ու ապագայով:... Իմ ողջ կյանքում ես մտքիս մեջ գրել եմ զանգակատունը, գրել եմ զանազան ձևերով. իբրև վեպ, իբրև վիպակ, իբրև ուսումնասիրություն, իբրև հոդվածների շարք, իբրև ողբերգություն կամ դրամա. ես գիտեի, որ դա մի օր պիտի գրվի»

/ Այս տողերը և՛ կարդացվում են և՛ցուցադրվում սահիկով:/

Հաջորդում է խմբի որևէ անդամի խոսքը՝ Սևակի մոսկովյան տարիների մասին:

Ծանր էին մոսկովյան տարիները բանաստեղծի համար, բայց կարիքը երբեք չկարողացավ նրան նետել «հացի խնդրի» մեջ: 1956 թվականին գերազանցության դիպլոմով ավարտեց Մաքսիմ Գորկու անվան գրական ինստիտուտը, որից հետո նրա առջև բացվեցին ստեղծագործական թռիչքի տարիներ: Հայ ժողովրդի մեծագույն ողբերգության՝ 1915 թվականի Եղեռնի, Կոմիտասի և հայ մյուս մտավորականների ողբերգության թեման, ուսանողության տարիներից սկսած՝ մտատանջում էին Պարույր Սևակին: Մոսկվայում ապրած տարիներին ստեղծել էր կոմիտասյան ձայնապնակների մի հարուստ հավաքածու, որպեսզի ուզած ժամանակ կարողանար լսել Կոմիտասի երգը. դողդողում էր այդ հավաքածուի վրա. հանկարծ մի բան չպակասի՞: Եվ Սևակի շրջապատում շատ շատերը հենց նրա շնորհիվ կապվեցին ու սիրեցին կոմիտասյան երգարվեստը:

Կոմիտասն ամենուրեք եղել է նրա հետ. հայրենի գյուղում, Երևանում, Մոսկվայում, օտարների և մտերիմների շրջապատում, ուրախության և թախծի ժամերին, ընկերական հավաքույթների ու հանդիպումների ժամանակ, առանձնության և մենության մեջ: «Իմ գիտակցական ողջ կյանքում ես եղել եմ նրա հետ, եթե կարելի է ասել՝ նրա մեջ, ինչպես բջիջը մարմնում, և այդպես էլ կգնա մինչև այն օրը, որ վախճան է կոչվում»,- այսպես է բանաստեղծն արտահայտել իր սերն ու պաշտամունքը Կոմիտասի հանդեպ:

Հաջորդում է խմբի մյուս անդամի խոսքը՝Սևակի պրպտումների մասին:

Կոմիտասյան թեմայով առաջին անգամ Պարույր Սևակը գրել է 1949 թվականին՝Կոմիտասի ծննդյան 80 ամյակի առթիվ: «Եվ երկու տասնյակ տարի»

վերնագրով բանաստեղծություն, որտեղ Սևակն իր ապրումների արտահայտման հիմք է դարձրել այն միտքը, որ երկու տասնամյակ հետո կնշվի մեծ երգահանի 100 ամյակը:Այսպես շարունակ մտքում և Կոմիտասի հետ և նրա մասին խոսելով՝ տողեր է երկնում, որոնց մի մասը թղթին է տալիս, մի մասը՝ ոչ: Իսկ 1956 թվականին գրում է՝

Նորից երգում, մորմոքում է աստվածային Կոմիտասը,
Կախարդում է ու մոգում է աստվածային Կոմիտասը,
Ամենամեծ դու նահատակ, ամենահայր , ամենահայ,
Գինու կարասն ուրիշներին, մեզ հերիք է քո մի թասը:

Այն անսահման սերը, որ ուներ բանաստեղծը Կոմիտասի և նրա երգի հանդեպ, միայն այս բանաստեղծությամբ չէր կարող արտահայտվել: 1957 թվականի սեպտեմբերին նա կերտում է «Կոմիտասի դիմանկարի առջև» բանաստեղծությունը, որը կարծես Կոմիտասի հայացքը, տաղանդն ու անկրկնելիությունը խորհրդանշող հուշակոթող – քերթվածք լինի:

Խումբը ասմունքում է «Կոմիտասի դիմանկարի առջև» բանաստեղծությունը կամ մի հատված:

Քո աչքե՛րը…
Այս աչքերը՝
Վանա ծովի մութ հատակ,
Նարեկացու հոգու պես խոր ու անտակ:
Այս աչքերը՝
Բուրգի ակնատ ու դղյակի լուսամուտ,
Սեվանի պես երերածուփ,
Արաքսի պես հոսանուտ:
Այս աչքերը՝
Դեռ կենդանի նահատակ,
Այս աչքերը՝
Մարմին առած պաղատանք:

Այս աչքերը՝
Պոռթկուն երա՛զ, դժվար կարո՛տ,
Ծանրը ե՛լք,
Մորմոքուն վե՛րք,
Ծովացած խե՛լք,
Ծորուն ե՛րգ…

Ու բերա՛նը…
Անբառ-անխոս այս բերանին նայելիս
Մեր տաճարներն ես վերհիշում,
Անին՝ թափուր գահերից,
Եվ ծյուրումն է կարծես հոսում
Կերոնների, ջահերի,
Ու սարսափն է կարծես խոսում
Կորուստների, ահերի:
Մեր կարոտի՛, մորմոքների՛, մահերի՛,
Ուրախության, սիրո, հույսի՝
Ամե՛ն տեսակ պահերի
Վառված խոսքն է այս բերանին միշտ թառել:
Այս բերանն է վաղակատա՛ր,
անկատա՛ր
և ապառնի՛՝
Ամե՛ն տեսակ բայերի
Խոնարհումը հույս-հավատով կատարել…

Իսկ ճակա՛տը…

Քո ճակատը
Մագաղաթի հին պատառիկ է ասես,
Մարմարոնյա մի ափ բեկոր-հուշարձան,
Կնճիռներըդ՝ հնադարյան հին խաղեր՝
Քեզնից առաջ - քեզնից հետո անվերծան:

Քո ճակա՛տը…
Սրբի ճակատ և հերոսի ասպարեզ,
Հարսանքատան ուրախ տանիք,
Ուր հնչում են նազպարեր:
Քո ճակա՛տը՝

Քրտնող մշակ ու գիտունի զինարան,
Մասունքների խորունկ խորան
Եվ ճգնողի մենարան:
Քո ճակա՛տը՝
Համբուրելի սուրբ խաչքար,
Թոնրի տաք խուփ
Եվ գեղջուկի թեղած կալ...

Եվ ակա՛նջը...

Քո ակա՛նջը՝
Մեղեդու դեմ՝ դըռնբաց,
Աղմուկի դեմ՝ միշտ կայուն.
Մեր նունուֆար ծաղկի պես
Բացվող-փակվող՝ զգայուն...
Քո ակա՛նջը՝
Կախարդական ձայնամաղ,
Եվ դրանով դու մեր հոգին,
Մեր դարերը մաղեցիր,
Թեփ-ժխորը անջատելով թողեցիր,
Իսկ մեղեդին՝
Նմո՛ւշ-նմո՛ւշ, մատնընտի՛ր,
Քո տաք հույզով ցողեցիր,
Անտակ հույսով հողեցիր,
Որ մենք քաղենք մեկին տաս:

Քո ակա՛նջը, Կոմիտա՛ս,
Քո ակա՛նջը՝
Պատարագվող եկեղեցի՛ սրբազան.
Քո ակա՛նջը՝
Շքեղ խեցի՛ ձայնալուր...
Ինչ վսեմ էր ու գեղեցիկ հայաբար,
Թե չարքերը խոր թաղեցին մինչևիսկ,
Աստծու նման դու պեղեցիր մեր հոգում,
Դու պեղեցիր ու զեղեցիր աշխարհում...
Անթեղեցիր դու մեր հուրը ցիրուցան,
Կանթեղեցիր մեր կրակը մթան մեջ...
Ինչ խեղեցին օտարները դարեդար՝
Դարմանեցիր ու դեղեցիր հրաշքով...
Թե նեղեցին ու շեղեցին մեր ուղուց՝
Ուղիղ ճամփի դո՛ւ մղեցիր մեզ անվերջ...

Դո՛ւ դարավոր երգի ցանքը քաղեցիր,
Մեր ծով բերքը դո՛ւ թեղեցիր մեր սրտում
Ու թխեցիր՝ հա՛ց դարձըրիր հոգևոր...

Քո ակա՛նջը, Կոմիտա՛ս,
Քո ականջը - մագնիսի պես -
Եղանակ էր հավաքում:
Ինչ ականջդ հավաքում՝
Մատներդ էին նվագում:
Քո մատնե՛րը...
Քո մատնե՛րը՝
Դարմանի մեջ սարսուռ ցորեն ջոկջկող,
Կարճատես ու թույլ աչքերից
Վարագույր ու փառ պոկող,
Մթնած մտքի ու փակ հոգու դուռ թակող,
Տնավերին ու պանդուխտին ողոքող,
Սիրած յարին սիրած յարից
Զատողի դեմ բողոքող,
Ցավ ու կսկիծ ամոքող,
Սեր ու կարոտ նվագող,
Բեկված շողեր,
Վճիտ ցողեր,
Սրտի դաղեր
Ու դողեր,
Գեղգեղանքի թրթիռներ,
Ելևէջի հրթիռներ,-
Հոսուն բոցեր
Ու տաք մոխիր հավաքող...

Քո մատները, Կոմիտա՛ս,
Վառվող ծոցին՝ զովարար,
Խորունկ խոցին՝ դեղատուր,
Լաց ու կոծին՝ սփոփանք,
Մանկան ճոճին՝ օրորում:

Քո մատների զարկի տակ
Մեր սրտերը՝ պաղ ստեղ,
Մեր սրտերը՝ անգիտակ,
Քո մատները՝ տաղաստեղծ:

Քո մատները՝ երգահան,

Ասմունքից հետո խումբը ամփոփում է իր աշխատանքը՝ համառոտ վերլուծական խոսք բանաստեղծության մասին , «Աչքերը Սևանի, Վանի ու Արաքսի պես երերաձուփ, անտակ ու հոսանուտ, բերանը՝անբառ, անխոս, պատմում է մեր կարոտի, մորմոքների, մահերի, ուրախության, սիրո մասին և հույս հավատով կատարում է վաղակատար, անկատար, ապառնի բայերի խոնարհումը: Ճակատը համբուրելի սուրբ խաչքար, ականջը՝ մեղեդու դեմ դռնբաց, կախարդական ձայնամաղ,իսկ մատները երգահան,տասնահատոր երգարան՝ սեր ու կարոտ նվագող, ցավ ու կսկիծ ամոքող, սիրած յարին սիրած յարից զատողի դեմ բորբոքող,մթնած մտքի ու փակ հոգու դուռ թակող...»

այնուհետև ցուցադրում են Կոմիտասի նկարը՝ Մարտիրոս Սարյանի հեղինակությամբ և բացատրում.



Հայկական համայնապատկերի համադրությամբ Մարտիրոս Սարյանը նկարել է Կոմիտասին (1969թ.), ում մասին ասել է. «Կոմիտասը, իհարկե, ինչպես բոլոր հանճարները, կոնկրետ մարդ է եղել: Բայց թէ ի՞նչ կոնկրետ: Եթե շատ կոնկրետ լիներ, էլ ի՞նչ Կոմիտաս: Նա իր մէջ կրել է բնությունը: Դա մեր հողն է, հողի հոտը, համը, ջուրը, սարերի օդը, էլ ի՞նչ ասեմ:
Նա այդ բոլորը բյուրեղացնում է երգով: Իհարկե, այստեղ կարևորը խոսքերը չեն: Կարևորը հենց երգն է, նրա երգի, նոտաների մեջ հենց այդ հողը, ջուրը զգում ես: Ա՛յ օրինակ, այս երգը՝ «Գարուն ա»…Հղում՝
https://www.youtube.com/watch?v=nHK7b0v7fYU

Ուրեմն, նա որքան ճիշտ է զգացել մեր գարունը: Մեր ամեն մի գարունը եղել է մութ տեղն ընկած մարդու դեպի լույս գնալու ձգտում»:

Գլուխ 4

Խումբ 3 «Կոմիտասյան դրաման»

Այս խմբի գործառույթն է պատմել դրվագներ Կոմիտասի կյանքից և բացատրել՝ ինչպես էր մեծ երգահանը ամբողջովին գրավել Պարույր Սևակի սիրտը։

Խմբի բոլոր անդամների ելույթները տեսագրվում են ֆիլմի համար

Խումբը նախապատրաստել է նաև սահիկաշար՝ նվիրված Կոմիտասին

Խմբի անդամներից մեկը ներկայացնում է.

Արձակագիր Առաքել Պատրիկը, լինելով ժամանակակիցն ու ականատեսը 1908-1915 թվականների արևմտահայության ողբերգական ապրումների , իր «Կոմիտասյան դրաման» վիպակում պատկերել է պատմական այդ ժամանակաշրջանը՝ առանցք ընդունելով Կոմիտասի ծավալած երաժշտական գործունեությունը՝ նրան համարելով հարազատ ժողովրդի դրամատիկ ճակատագրի անձնավորումը։ Այս վիպակը կարելի է համարել Կոմիտասին ճանաչելու ամենահեշտ և ամենակարճ ճանապարհներից մեկը։ Եվ Կոմիտասին ճանաչելուց հետո այնպես ես տարվում նրանով ու նվիրվում նրան, որ գրականության ու արվեստի մեջ նրան ես փնտրում անընդմեջ։

Մեծ երաժշտագետը ղեկավարում էր «Գուսան» երեք հարյուր հոգանոց երգչախումբը, որի առաջին երգն էր՝ հղում՝ https://www.youtube.com/watch?v=IZrTfcKybC0

Անձրև եկավ շաղալեն, հղում՝ https://www.youtube.com/watch?v=cv0Y7P-iFlg

Ուռու տերև դողալեն,

Վայ լե, լե, լե, լե, լե, լե, լե.. հղում՝ https://www.youtube.com/watch?v=gFfYlhyxwC4

Հրես եկավ իմ ախպեր

Ալ ձին տակին խաղալեն։

Խալիչեքը փռել եմ,

Նախշուն բարձեր դրել եմ,

Թառլան ջան, քեզ ուտելու

Սեր ու կարագ հազրել եմ։

Տապակած հավի ճուտ բերեմ, / խումբը կամ որևէ մեկը երգում է /

Ոչխարի մածուն մերեմ,

Որ գիտենաս, ազիզ ջան,

Թե քեզ սրտով կսիրեմ։

Ղուշ մի դառնա թևավոր,

Դու խաղ կանչե ձևավոր,

Յարաբ կլնի/ էն օրը,

Որ գաս մեր տուն թագավոր։

Կոմիտասը նախ ինքն էր երգում, հետո սկզբնավորում էր երգի հաջորդական ձայները։ Երգչախումբը քարացած ու հմայված հետևում էր խմբավարի բացատրություններին, որոնք մոգական ազդեցություն էին ունենում երգիչ- երգչուհիների վրա։ Աղջիկներից շատերն էլ զարմանում էին կուսակրոն այս վարդապետի վրա, ով

համարձակ ու իրական ապրումներով կատարում էր սիրային երգեր: Կոմիտասը երգում էր ոգևորված՝ մեջընդմեջ բացատրելով մեներգի ու խմբերգի ամեն մի հատվածը և ձայնական նրբերանգները, կրկնել էր տալիս, սրբագրում, մինչև հասներ ներդաշնակության:

Հնչեցնում են են Կոմիտասի ձայնը

Իսկ ներդաշնակության ձգտող մարդը անընստգյուտ բնության մի մասնիկն է: Բնության հավերժական մասնիկն էր Կոմիտասը, որ արեգնադեմ պայծառությամբ երգում էր. հղում՝ https://www.youtube.com/watch?v=SXd0UlauVyk

Քելեր, սոլեր իմ յարը,Արևի տակին,
Քելեր, սոլեր իմ յարը, Սարի սովոր, մեն – մենավոր , Շե՛կ տղա:
Շո՛ղ արեգակ, Թո՛ղ արեգակ, Ե՛կ տղա:

Սակայն « Սև էր հայուն ճակատագիրը...»

Սահիկով ցուցադրվում են եղեռնազարկ մտավորականների նկարներից և այդ օրերը պատմող պատկերներ

Բոլոր խմբերին հանձնարարվել է դիտել «Վարդապետը» վավերագրական ֆիլմը Կոմիտասի մասին կենսագրական տեղեկություններ հավաքելու և նրան ճանաչելու համար: https://www.youtube.com/watch?v=p9XXR2NskMM

(Մաս 1,Մաս 2)

ԳԼՈՒԽ 5

Խումբ 4 Մտորումներ ստեղծագործական ճանապարհին և «Անլռելի զանգակատուն» պոեմի ծնունդը

Խումբը ներկայացնում է.

Բառերի, դարձվածքների, առած-ասացվածքների անսպառ պաշար ունեցող բանաստեղծ Պարույր Սևակը, որ նաև պատմական փաստերի անհավատալի չափերի ուսումնասիրություններ էր կատարել, պատրաստվում էր երկնել մի հրաշալի ստեղծագործություն, որի մասին մշտապես մտածել էր:

Կոմիտասի մասին բազմաթիվ մտորումներն ու գրառումները անվերջ խոսում էին Սևակի՝ հայ մեծ երգահանով տարված լինելու մասին: Բանաստեղծը խորը փնտրտուքի մեջ էր. մտածում և գտավ «հայ երգի Մեսրոպ Մաշտոցին» երախտահատույց լինելու անզուգական ձևը: Աստված Պարույր Սևակին տաղանդ էր շնորհել, որպեսզի ի կատար

ածեր սուրբ Կոմիտասի խնկարկման ծեսը: Վերջապես ծնվեց այն ստեղծագործությունը, որին երկար սպասել էր ինչպես Պարույր Սևակը, այնպես էլ ամեն մի հայ:

«Եվ աղմկոտ, կեղտոտ, ցուրտ, ծխաշատ գարեջրատանը, հեռավոր Մոսկվայում հանկարծ ռադիոյից հնչեց կոմիտասյան երգը: Ինձ համար ամեն ինչ պարզվեց մի վայրկյանում. պարզվեց նախ վերնագիրը՝ Կոմիտասյան համանվագ, հետո՝ Զարմանալի զանգակատուն, ապա նաև՝ կառուցվածքը՝ ըստ կոմիտասյան երգերի. այսինքն՝ շարադրել Կոմիտասի ողջ կյանքը՝ ըստ նրա համապատասխան երգերի. եթե որբ է՝ Անտունի, եթե պանդուխտ է, Կռունկ, եթե սիրո մասին է՝ Սոնա յար: Եվ քանի որ գործը հղացված էր իբրև համանվագ՝ սիմֆոնիա, կամ իր եկեղեցական կարգը նկատի ունենալով՝ իբրև օրատորիա, ուրեմն պիտի ունենար իր հանդիսավոր սկիզբը: Այդ պատճառով էլ գարեջրատնից տուն հասնելով՝ նույն օրը գրեցի պոեմի այն մասերը,որոնք հետո պոեմի կառուցվածքի թելադրանքով սկզբից տեղափոխվեցին վերջը»:

Խմբի անդամներից մյուսը բացատրում է՝

Ի՞նչ ի նկատի ունի Սևակը՝ օրատորիա ասելով: Օրատորիան դրամատիկական թեմայով գրված երաժշտական ծավալուն ստեղծագործություն է,որը գրվում է երգչախմբի , մենակատարների և նվագախմբի միատեղ կատարման համար: Որպեսզի պարզ դառնա «Անլռելի զանգակատունը» իբրև օրատորիա ներկայացնելու գաղափարը, պետք է ուսումնասիրել եկեղեցական Կոմիտասի երաժշտական գործունեությունը: Եթե Պարույր Սևակը բազմաթիվ խորը ուսումնասիրություններից հետո միայն հանձն առավ գրելու 7000 տող ունեցող պոեմը, ապա դա սովորեցնում է այն, որ ընթերցողը այդ 7000 տողը կարդալուց առաջ նախ պետք է ճանաչի մեծ երաժշտագետին, նրա մասին կարդացած լինի կենսագրական, հուշագրական գործեր, որպեսզի պոեմի քնարական հերոսին ընկալի ողջ ճշմարտությամբ: Կարող է լինել նաև հակառակը. «Անլռելի զանգակատունը» պոեմը կարդացողի մեջ ցանկություն է առաջանում ճանաչել Կոմիտասին: Փնտրում և գտնում է երգահանի կյանքը և երաժշտական գործունեությունը պատմող նյութեր ու հասկանում է, որ յուրաքանչյուր հայի պարտքն է՝ խոնարհվել մեծ երգահանի կատարած գործի առջև:

Խմբի անդամներից հաջորդը բացատրում է՝

Չարենցի «Կոմիտասի հիշատակին» պոեմը ևս ոգեշնչել էր Սևակին, դարձել մտորումների մեկ այլ հանգրվան: Այստեղ նա տեսնում էր հայ երգի անցած ուղու պատկերը, որ միահյուսված է սեփական ժողովրդի ճակատագրին:

Հայրենի երգն ես դու մեր, Հալածական, իմչպես ամպ,
Որ քամիներն են ցրել Եվ տարիներն ապստամբ:
Ժողովրդի հանճարեղ Սրտով եկած ձայն ու շունչ,
Որ բարբառել ես դարեր Օտարության մշուշում:

Չարենցին շարունակեց Սևակը, իսկ Կոմիտասի կերպարը հայ ժողովրդի համար եղավ անօրինակ բախտի քննություն:Բայց Չարենցի նման Սևակն էլ անցավ «արգելված գրականություն» կոչվող ճանապարհով: Բանաստեղծների գործը բոլոր ժամանակներում էլ ծանր է եղել, որովհետև նրանք, ինչպես Սևակն էր ասում,

Թե քրտնում են՝ոչ ամոթից, Այլ միմիայն ապակու պես

Իրենց ներսի տաքությունից, Երբ որ սաստիկ ցուրտ է դրսում:

Սևակի ստեղծագործական վերելքի տարիներին հասկանալի իմաստով սաստիկ ցուրտ էր դրսում...

Խմբի անդամներից մեկը ներկայանում է այսպես՝

Պատմում է Խիկար Բարսեղյանը

Պատմաբան, լրագրող Ծնվել է ՀՀ Շինուհայր գյուղում (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում):

1941թ. ավարտել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1941-44թթ ծառայել է սովետական բանակում: 1944-53թթ աշխատել է «Սովետական Հայաստան», «Բանվոր» թերթերում, ՀԿԿ Կենտկոմում, 1953-61թթ՝ ՄԼԻ հայկական մասնաճյուղում, սկզբում որպես տնօրենի տեղակալ, ապա՝ տնօրեն, 1961-67թթ՝ ՀՀ ԳԱ պատմության ինստիտուտում: 1967-70թթ եղել է «Հայաստան» հրատարակչության տնօրենը: 1970թ-ից աշխատել է որպես ՀՀ ԳԱ Նախագահությանն առընթեր հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի բաժնի վարիչ: 1948թ-ից դասավանդել է Երևանի բուհերում: Եղել է Հայկական ԽՍՀ 5-րդ գումարման Գերագույն սովետի դեպուտատ:

«1959- ին էր: Հայաստանի կոմկուսի պատմության ինստիտուտի տնօրենն էի:

Գիտության գծով տնօրենի տեղակալ Գալուստ Գալոյանի հետ գնացել էինք Մոսկվա՝ գիտական գործուղում: Հոկտեմբերի 12-ին զանգահարեցի «Մոսկվա» հյուրանոց նույնպես

գործուղման մեջ գտնվող Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Թովմասյանին ինստիտուտի հետ կապված հարցերով հանդիպելու: Գնացինք: Գալոյանի հետ նոր էինք մտել քարտուղարի համարը, երբ Մոսկվայում Հայաստանի կառավարության մշտական ներկայացուցչի տեղակալ Զավեն Չարճյանը, թևի տակ մի փոքրիկ փաթեթ, ներս մտավ: Քարտուղարի ականջին ինչ-որ բան շշնջաց: Իսկ նա ասաց. «Ընկերներից բան չունենք թաքցնելու, ինստիտուտի աշխատողներ են, փաթեթը բացի՛ր, տեսնենք» Բացեց: Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» գրքի ազդանմուշային օրինակն էր:



Այն լույս էր տեսել Համո Սահյանի խմբագրությամբ՝ 5000 օրինակ տպաքանակով: Խնդրում էին քարտուղարի համաձայնությունը՝ կանգնեցնելու գրքի տպաքանակը: Քարտուղարն իր սև ու թավ հոնքերն իրար խառնելով ասաց.

- Իսկ Պարույրին գիտե՞ք,կարդացե՞լ եք նրա բանաստեղծությունները:
- Ինչու՞ չէ, ինքնատիպ բանաստեղծ է...1957 թ.-ին լույս տեսավ նրա «Նորից քեզ հետ»ժողովածուն:
- Այդ դեպքում մի օրինակ վերցրեք և ծանոթացեք:Վաղը Ձեր կարծիքը կասեք:

... Գիշերը մի շնչով «Անլռելի զանգակատունը» կարդացի:Հաջորդ օրը,պլանավորված ժամին հանդիպեցի Կենտկոմի քարտուղարին: Նա նույնպես կարդացել էր: Հիացած էր, բայց ավելի շատ՝ զարմացած:

_ Հետաքրքիր, անցյալը ներկայի հետ կապող մեր արմատներին վերադարձող բանաստեղծ է Պարույրը, -ասաց նա; -Երիտասարդ գրողներից այսքան խորաթափանց, այսքան փարթամ, պատկերավոր ու ճոխ լեզվով քիչ գործեր եմ կարդացել: Մեկ էլ Հովհաննես Շիրազնն է այսպես հախուռն: Երևում է՝ Պարույրը մեր ժողովրդի պատմությունը լավ գիտի: Բայց չգիտեմ՝ նրան ճիշտ կհասկանա՞ն թե ոչ... Կենտկոմի քարտուղարը խնդրեց գրավոր կարծիք տալ գրքի մասին:

_ Կենտկոմի անդամ եք, ինստիտուտի տնօրեն,ձեր խոսքը նույնպես կարևոր է:

Ես էլ խոստացա՝ Երևան վերադառնալուց հետո ընդունել Պարույրին և զրուցել նրա հետ:

Գիրքը բոլորի ուշադրության կենտրոնում էր: Շատ չանցած՝ «Գրական թերթում» լույս տեսավ Սուրեն Աղաբաբյանի «Ոգևորություն և վարպետություն» շահավետ հոդվածը,որտեղ ասված էր.«Անլռելի զանգակատանը» երկարատև կյանք է սպասում գրականության մեջ»:



ԳԼՈՒԽ 6

Խումբ 5 «Անլռելի զանգակատուն » պոեմի ընդունելությունը և հայ ժողովրդի ոգևորությունը

Ներկայանում է հաջորդ խումբը իր ձևավորած սահիկաշարով և մյուս աշխատանքներով: Խմբի յուրաքանչյուր անդամի ելույթ տեսագրվում է

Եվ ահա՝ 1959 թվականին «Անլռելի զանգակատունը» ճայթեց հայ գրականության երկնակամարում՝ հեղինակի անվանը շռնդալից հռչակ հաղորդելով: Հայ ժողովուրդը միանգամից ընդունեց և սիրեց գրականությանը նոր թափ հաղորդած երիտասարդ գրողին: Պոեմի հաջողությունը պայմանավորված էր բանաստեղծի խորագիտությամբ:
Պոեմին շունչ և հոգի են հաղորդում շռայլորեն օգտագործված ժողովրդական երգի ու խոսքի համադրությունները, պատկերավորման սևակյան արտահայտչամիջոցները, գեղեցիկ բառախաղերը: Հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Շիրազը Պարույրի՝ իբրև մեծ բանաստեղծի մեծությունը լավ էր հասկանում: «Պարույրի «Անլռելի զանգակատունը» մասիսված գործ է,-ասում էր,-չարենցյան շնչով և թափով ժայթքված պոեմ, դե ինչ պոեմ. դա մեր ժողովրդի պատմության սթափ ղողանջն է: Պարույրը Նարեկացի է: Գրիգոր Նարեկացու օրհնանքը, թափը, մռնչոցը, պատկերները, բողոքը և վարպետությունը կա նրա հրաժայթք տողերում(Ինչ խոր ես գրած լինեմ) »:

« Մեծ էր «Անլռելի Զանգակատան» թողած ազդեցությունը հայ գրական մտքի և հասարակական-քաղաքական ընդհանուր տրամադրությունների ու հոգեվիճակի վրա:
Մեծ ու անմահ Կոմիտասը, հայ ժողովրդի ապրած խորագույն ողբերգությունը՝ Մեծ եղեռնը, հայոց ըմբոնող ոգու հերոսական դրսևորումներն առաջին անգամ Խորհրդային Հայաստանում դարձել էին գրական մեծ կտավի նյութ:
Հանճարեղ երգահանի կերպարը եղավ այն հենքն ու պատվանդանը, որի վրա հենվելով բանաստեղծը գեղարվեստի սքանչելի ուժով ներկայացրեց մի ողջ ժողովրդի գրեթե մեկդարյա պատմության հավաքական համայնապատկերը:
Ջերմ ու ոգևորիչ արձագանքներ եղան նաև ու հատկապես սփյուռքում: Այնտեղ լույս տեսնող ազդեցիկ պարբերականներից՝ «Պայքարում» գրախոսն այսպես արձագանքեց. «Ամեն հայ՝ մեր զարհուրելիորեն խոշտանգված երկու միլիոն նահատակներուն ձոնված այս երախտիքի կոթողը պիտի իր ծոցում պահի, իր սրտին վրա, իսկ գիշերները իր բարձին տակ, որպես նոր Նարեկ, որպեսզի չմոռնա զարհուրելի եղեռնը… և հայ դատի «պաշտպան» մեղապարտ պետությունները» («Պայքար», 2 մարտի, 1960թ.):
«Անլռելի Զանգակատունը» հաղթանակ էր, մեծ, փայլուն հաղթանակ: Այն Պ. Սևակի անունը միանգամից կտրեց իր սերնդի բանաստեղծների շղթայից և մեկընդմիշտ առաջ մղեց : Այն հաղթանակ էր, ոչ միայն գրական առումներով ու չափանիշներով, այլև պատմական:

Եթե Կոմիտասը հայրենի ժողովրդի համար հրաշքներ կերտեց հնչյուններով, ապա Սևակը ժողովրդին հիացրեց խոսքի արվեստի իր բացառիկ տաղանդով:
Եթե Կոմիտասը 19-րդ դարավերջին եւ 20-րդի սկզբին երգով և երաժշտությամբ փորձեց զարթնեցնել հայության ազգային արժանապատվության նիրհող ոգին, ապա Պարույր Սևակը 20-րդ դարակեսին բոցաշունչ բանաստեղծական խոսքով զգաստության կոչեց ապրողաց՝ իր հայրենակիցներին:
Հերոսությու՛ն և ողբերգությո՛ւն: Միառժամանա՛կ, կողք-կողքի՝ զուգահեռի՛ վրա:
Այդպիսին է նրանց կյանքն ու գործը: Այդպես են նրանք մխրճվում ազգի և ժողովրդի պատմության խորքերը, հավերժանում սերունդների մշտարթուն հիշողության մեջ:
Բարձր, շատ բարձր է «Անլռելի Զանգակատան» ղողանջը, քանզի այն հայ մարդուն, հայ ոգու կրողին լսելի է աշխարհի բոլոր ծայրերում... »:

Արմեն Կարապետյան
Պատմական գիտությունների թեկնածու,
հրապարակախոս, ՀՀ լրագրողների
միության անդամ,ՀՀ ԳԱԱ ավագ գիտաշխատող

Խմբի անդամները նշում են, որ նմանատիպ բազմաթիվ օրինակներ կարող են բերել, որոնք բարձր գնահատանքի են արժանացրել Պարույր Սևակի այս պոեմը և ոչ միայն:

ԳԼՈՒԽ 7

Խումբ 6 Պոեմի կառուցվածքը և բովանդակությունը. պոեմից դեպի երգարվեստ ու դեպի մեծ իրականություն:

Խմբի անդամները ներկայանում են իրենց աշխատանքով, տեսաձայնագրվում են ֆիլմի համար:

Պոեմում Կոմիտասի կյանքը և ժողովրդի պատմությունը միասնություն են:
«Անտունի» https://www.youtube.com/watch?v=NgH53-1kQLc երգով որբության մասին է խոսում, պանդխտության մասին պատմում է «Կռունկ» (հղում՝ https://www.youtube.com/watch?v=LEOH90hcz8g) երգի միջոցով, սերը խոստովանում է «Սոնա յարը» (https://www.youtube.com/watch?v=NwNZZdo7kGg) երգով:

Պոեմի կառուցվածքի երաժշտական բնույթը պայմանավորված է գլխավոր հերոսի՝ Կոմիտասի ստեղծագործական նկարագրով: Պոեմը կազմված է վեց համազանգից ու ղողանջներից.«Ցայգալուստի համազանգ», «Արևագալի համազանգ», «Միջօրեի համազանգ», «Ծավալվող համազանգ», «Եղեռնի համազանգ», «Միագացնող արձագանք»:

Ցայգալույսի համազանգ

Հազար ութ հարյուր վաթսունինն թվին
Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տվին,
Հայոց արտերում ի՞նչ բերք էր հասել,-
Դժվար է ասել:

«Ցայգալույսի համազանգի» առաջին մասում, որը կոչվում է «Ղողանջ ավետիսի», նկարագրվում է Սողոմոնի ծնունդը: Սակայն 1869 թ. ծնվել է ոչ միայն Կոմիտասը: Նույն տարում են ծնվել նաև Թումանյանը, Շանթը

Այս համազանգը ներկայացնում է Կոմիտասի կյանքը՝ նրա ծնունդը, որբությունը: Նույն ժամանակ բեկվում է նաև հայ ժողովրդի ճակատագիրը. սկսվում են Ադանայի կոտորածները :

«Արևագալի համազանգում» պատկերվում է Հայոց աշխարհը՝ աշխատանքային առօրյայով և աշխատանքին ուղեկցող երգով: Կոմիտասը զբաղվում է երգերի մաքրագործմամբ՝ հեռացնելով օտար տարրերը: Այնուհետև նա մեկնում է Բեռլին՝ ուսանելու: Իրագործվում է Հայոց Մեծ Եղեռնը:

«Միջօրեի համազանգում» պատկերում է կոտորածներից ուշքի եկած ժողովրդին: Կոտորածներից ուշքի եկած ժողովուրդը շարունակում է

ստեղծագործ աշխատանքը, նշում տոներ, հարսանիքներ : Իսկ Կոմիտասը կրկին իր ժողովրդի հետ է, ուսումնասիրում ու մաքրում է հայ երգը:

«Ծավալվող համազանգում» հայ երգը Կոմիտասի շնորհիվ մտնում է միջազգային ասպարեզ: Կոմիտասը Էջմիածնից մեկնում է Պոլիս, ստեղծում <<Գուսան>> երգչախումբը, դասախոսություններ կարդում, համերգների ու զեկուցումների համար հրավիրվում Փարիզ, Բեռլին: Սկսում է գրել <<Վարդան>> և <<Անուշ>> օպերաները: Հենց այդ ժամանակ վրա է հասնում համազգային ոգբերգությունը:

«Եղեռնի համազանգում» բազմաթիվ մտավորականների հետ աքսորվում է նաև Կոմիտասը. չնայած ճանապարհի կեսից նրան ետ են բերում,այնուհանդերձ նա դառնում իր ժողովրդի սպանդի ականատեսը: Վիշտն ու ցավը մթագնում է նրա միտքն ու հոգին: Այն, ինչին Կոմիտասը ականատես է լինում,հասցնում է նրան խելագարության:

«Ալան – թալան, Կեռ յաթաղան...Եվ ով կոծեր,կուրծքը ծեծեր:Քշեցին ու՞ր՝ դեպի Դեր Զոր...15 թիվ: Ապրիլի 10...Ահեղ գիշեր, որ բորբ ներկվեց ոչ արևով,այլ մեր արյամբ...Սուրբ խորաններ կողոպտվեցին՝ Խորանները հայ կաճառի,Հայ դպրության սուրբ տաճարի.Հայ հանճարի Ծաղկուն ծառի բոլոր ոստերն անգթորեն կտրատվեցին...»

...Պատկերներից այս ահազարհուր,բայց և իրական,Նախ ցնորվեցին աչքերը նրա, Եվ ապա միտքը, միտքը տիրական... Մի գերեզմանվող լռություն տիրեց նրա հոգու մեջ...

Մեր դժխեմ բախտից՝
Նա չհասցրրեց իր օպերայում
Թշվառ Անուշին խելացընորել,
Եվ ի՛նքը, ի՛նքը, ի՛նքը ցնորվեց…
Մեր դաժան բախտից՝
Սասնա ծռերին երգել չտված,
Նա ինքը դարձավ նոր Փոքրը Մհեր

Ու դեռ կենդանի՛, ո՛ղջ-ո՛ղջ զնդանվեց
Հոգեբուժարան- Ագռավաքարում…

«Ահագնացող արձագանքում»,որ վերջերգն է, բանաստեղծը ներկայացնում է վերածնված հայրենիքը։ Հայ ազգի զավակները բնավեր թռչունների նման վերադառնում են հայրենիք։ Վերադառնում է նաև Կոմիտասը, բայց արդեն հավերժություն, դարձած երգ ու կարոտ։ Պոեմի վերջում Սևակը գրում է

Ընդունիր դո՛ւ, դո՛ւ՝ մեր երգի
Մշտահնչուն նվագարան.
Ընդունիր դո՛ւ՝ մեր ցաքուցիր
Մասունքների հավաքարա՛ր.
Դու՝ խազերի մեր քերական,
Դու՝ հոգևոր մեր շարական.
Դու՝ սրբազան մի ավազան,
Որ մեր հոգին ախտահանեց.
Դու՝ բիբլիական մի գավազան,
Որ ուր դիպավ՝ աղբյուր հանեց.
Դու մեր կարոտ ու մեր մորմոք,
Մեր տաղի քուրմ,
Մեր խաղի մոգ,
Մեր մշտահունչ ու մշտարթուն,
Անլռելի զանգակատո՛ւն…

«Կան մեծություններ,- գրել է Սևակը,-որոնց դիմանկարի կերտումը վեր է ամեն մի թեկուզ հանճարեղ նկարչի հնարավորությունից. ոչ մի պատկեր կամ քանդակ չի պարփակում նրանց որքանությունը։ Դրանց փոքրիշատե լավ պատկերելու համար հարկավոր է պատկերների ու քանդակների մի ամբողջ շարք։Մեզ համար այդպիսի մեծություն է Կոմիտասը »։

Հայոց պատմությունը, աշխարհագրությունն ու ազգագրությունը, հայ մարդու ողբերգական ճակատագիրն ու հերոսական կյանքը, ազգային բնավորությունն ու սովորույթները կենցաղը ժողովրդական ու հոգևոր տարաբնույթ երգերը դարձան հիմք, որի վրա Սևակը կառուցեց «հայ երգի Մեսրոպ Մաշտոցին» նվիրված իր հուշակոթողը՝ Կոմիտասի կենսագրությունը։

Պարույր Սևակը քանդակեց եկեղեցական խաչքարակերտ հուշակոթող՝ համազանգերով ու ղողանջներով, որի հավերժությունը պայմանավորված է հայ ժողովրդի հարատևությամբ։

Պարույր Սևակի համար առավել ծանր էր այն հանգամանքը, որ Կոմիտասը հայրենիքից հեռու ազգային այդ սարսափելի ողբերգությունը իր մեջ կրեց ևս քսան տարի և այդքան երկար ժամանակ նա ամեն օր մթագնում էր նրա ուղեղը .վերապրում էր ցավը, ցնորվում էր նորից ու նորից, և երբ մի քիչ ուղեղն ուզում էր պայծառանալ, դարձյալ կսկիծը մթագնում էր նրան։

Այդ մորմոքն էր , որ փոխանցվել էր Պարույրին և նրան որոնումների մեջ գցել։ Ինչպե՞ս գրի, ի՞նչ գրի. բանաստեղծություն, վեպ, վիպակ, ողբերգություն, ուումնասիրություն թե հոդված։ Ի՞նչ գրի, որ կարողանա ճշմարիտ իրականությունը պատկերել մի մարդու մասին, ով միայն իր ազգինը չէ, այլ ողջ մոլորակինն է, քանի որ երաժշտությունը լեզու և ազգություն չի ճանաչում,այն Աստծո թելադրանքով հնչում է մարդ արարածի համար և միայն ու միայն բարություն և մարդասիրություն է քարոզում։Իր ապրած մարդատյաց դարում Կոմիտասը այն մեծ մարդասերն էր ,որ մարդու ցավը իր հոգու մեջ կրելով և հոգեկան ցավից կեղեքվելով՝ այդպես էլ ոգեղենացավ։ Երկար մտորումները Սևակին տարան մինչև Զանգակատուն։ Աստծո օրհնությամբ Սևակը երկնեց իր երբեք չլռող պոեմը. այն ընթերցվելու է բոլոր ժամանակներում,բոլոր սերունդների համար։

Պարույր Սևակը հասկացավ, որ հայ ժողովրդի զավակի՝ հայ երգի Մեսրոպ Մաշտոցի՝ ամենահայր և ամենահայ Կոմիտասի մասին պատմելիս պետք էր խոսքը հենց ժողովրդի բառ ու բանով համեմել, որպեսզի հզորանար ասելիքը, որպեսզի ծնվեր մի ստեղծագործություն,որը արժանի կլիներ նվիրաբերելու Կոմիտասի նման ոգեղեն արարծի ապրած կյանքի խնկարկմանը, արած գործի դրվատանքին։

Այսպիսով՝ Պարույր Սևակը ընթերցող հանրությանը ներկայացավ՝ որպես ինքնատիպ բանաստեղծ, իսկ նրա պոեմում արտացոլվեց բանաստեղծի՝ որպես գիտնականի ու գեղագետի լայն իմացությունները. հայոց պատմությունը, աշխարհագրությունը, ազգագրությունը, ինչպես նաև հայ ազգի ողբերգական ճակատագիրը, բնավորությունն ու մարդկային նկարագիրը, կենցաղը, սովորույթները, ժողովրդական ու հոգևոր երգերը միահյուսվեցին և դարձան հայ երգի Մեսրոպ Մաշտոցի կենսագրությունը պատմող գեղարվեստական անկրկնելի կոթող։

Սիրելի՛ ընթերցող, քո սեղանի գրքերից մեկը դարձրո՛ւ «Անլռելի զանգակատունը», հերթով այցելի՛ր բոլոր համազանգերին, հնչեցրո՛ւ ղողանջները և պարուրի՛ր հոգիդ հպարտության լույսով։ Հաղորդակցվի՛ր հոգևոր և ժողովրդական երգին, փառաբանի՛ր Կոմիտասին՝ անսալով նրա քաղցրահնչյուն ձայնը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ ամփոփելով այս հետազոտական աշխատանքը «Նախագծային աշխատանքը «Գրականություն» առարկայի դասավանդման գործընթացում՝ որպես սովորողների ինքնուրույնության, նախաձեռնողականության եվ ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց» թեմայի շուրջ՝ նշեմ, որ այս և նմանատիպ ձեռնարկները հնարավորություն են տալիս բավականին հետաքրքիր ուսումնական գործընթաց իրականացնել։ Կոնկրետ այս՝ «Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի ստեղծման պատմությունը» նախագծային աշխատանքի միջոցով սովորողները, կատարելով բազմաթիվ հետազոտական աշխատանքներ, կարողանում են ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ Պարույր Սևակի, Կոմիտասի, նրանց հետ առնչվող պատմական դեպքերի, նշանավոր այլ անձանց մասին և տիրապետում «Անլռելի զանգակատուն» պոեմի ստեղծման պատմությանը։ Կատարում են իրենց հետազոտությունները, պատմում միմյանց, հանրայնացնում են իմացածը, նախաձեռնում են նյութը ներկայացնելու հետաքրքիր և ժամանակակից եղանակներ, հայտնում են կարծիքներ, աչքի ընկնում ստեղծարարությամբ, ստեղծագործական առանձնահատկություններով, դրսևորում ունեցած շնորհները, միմյանց կարծիքները և առաջարկությունները հաշվի առնելով՝ նպաստում նախագծային աշխատանքի պաշտպանության գործընթացին։ Արդյունքում՝ ուսուցիչը հասնում է իր առջև դրված նպատակներին, աշակերտների միջոցով լուծում է նպատակներին հասնելու խնդիրները, կարողանում է առարկայացնել մատուցած գիտելիքը և սովորողի ենթագիտակցության մեջ ձևավորում՝ ցանկացած աշխատանք կատարելու պատրաստակամություն և ակնկալելի վերջնարդյունք։ Քանի որ նախագծային մեթոդը, խնդրի մանրամասն մշակման միջոցով դիդակտիկ նպատակին հասնելու մեթոդ է, որը պետք է ավարտվի միանգամայն իրական, շոշափելի գործնական արդյունքով՝ ձևակերպված այս կամ այն ձևով, ըստ այդմ՝ նշված նախագծային աշխատանքի համար՝ որպես վերջնադյունք, աշակերտները ընտրել են է ֆիլմի ստեղծում պատրաստած սահիկաշարերի, տեսանյութերի, ձայնագրությունների, տեսանկարահանումների միջոցով։ Ֆիլմը կունենա ուսումնական և ճանաչողական նշանակություն,բնույթով՝ վավերագրական, կցուցադրվի մյուս դասարանների համար և կտեղադրվի համացանցում՝ որպես սովորողների նախագծային աշխատանքի արդյունք։

Ուսուցիչը կիրականացնի գնահատման գործընթաց, կարժևորվի աշխատանքը, խմբերի բոլոր աշակերտները իրենց աշխատանքի համար կստանան միավորային գնահատականներ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն---------- 1

Հետազոտության նպատակը և խնդիրները---------- 1

Գլուխ 1. Նախագծային աշխատանքը «Գրականություն» առարկայի դասավանդման գործընթացում՝ որպես սովորողների ինքնուրույնության, նախաձեռնողականության եվ ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց---------- 3

1.1 Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի ստեղծման պատմությունը---------- 3

Գլուխ 2. Պարույր Ղազարյանից մինչև Պարույր Սևակ ------ 7

Գլուխ 3. Սևակի ակնածանքը դեպի երաժշտագետ Կոմիտասը----13

Գլուխ 4 . «Կոմիտասյան դրաման» ---------- 17

Գլուխ 5 .Մտորումներ ստեղծագործական ճանապարհին և «Անլռելի զանգակատուն» պոեմի ծնունդը---------- 18

Գլուխ 6. «Անլռելի զանգակատուն » պոեմի ընդունելությունը և հայ ժողովրդի ոգևորությունը---------- 22

Գլուխ 7. Պոեմի կառուցվածքը և բովանդակությունը. պոեմից դեպի երգարվեստ ու դեպի մեծ իրականություն---------- 24

Եզրակացություն ---------- 28

Օգտագործված գրականության ցանկ----------3

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Նախագծային մեթոդ հղում https://hy.wikipedia.org/wiki/
Պարույր Սևակ. «Ինքնակենսագրություն» https://blognews.am/arm/news/20022/
Պարույր Սևակի տուն-թանգարանի մասին՝ Վիքիպեդիայից՝ ազատ հանրագիտարանից
Պատրիկ Առաքել « Կոմիտասյան դրաման»

Պարույր Սևակ «Անլռելի զանգակատուն» պոեմը

Խիկար Բարսեղյան« Պարույր Սևակի «Եղիցի լույսի» ոդիսականը և ոչ միայն...»
Երգերի հղումներ https://www.youtube.com/watch?v=SXd0UlauVyk
https://www.youtube.com/watch?v=cv0Y7P-iFlg
https://www.youtube.com/watch?v=gFfYlhyxwC4

Վավերագրական ֆիլմ՝ 2 մասով. «Վարդապետը»

հղում https://www.youtube.com/watch?v=p9XXR2NskMM&t=2s